ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«06» դեկտեմբեր 2020թ. No 2636-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՐՔ» ԻՆՖԵԿՑԻՈՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ, ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՐՔ» ԻՆՖԵԿՑԻՈՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՐՔ» ԻՆՖԵԿՑԻՈՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՆՈՐՔ» ԻՆՖԵԿՑԻՈՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 77-Ա որոշման 5-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ և 24-25-րդ հոդվածներով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ Ե՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընդլայնվող ընկերություն կամ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերություն) և «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» (այսուհետ նաև՝ Միացող ընկերություն) փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված միացման պայմանագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Միացող ընկերության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Ընդլայնվող ընկերությանը փոխանցման ակտը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հիմք ընդունելով միացման պայմանագրի 2.2 կետում շարադրված Ընդլայնվող ընկերության կանոնադրական կապիտալի հաշվարկման բանաձևը՝ սահմանել Ընդլայնվող ընկերության կանոնադրական կապիտալը 170 180 000 (մեկ հարյուր յոթանասուն միլիոն հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 34 036 (երեսունչորս հազար երեսունվեց) հատ 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր և հաստատել Ընդլայնվող ընկերության կանոնադրության փոփոխությունը համաձայն հավելված 3-ի:

4. Մեր Դավիդյանցին ազատել Ընդլայնվող ընկերության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

5. Ընդլայնվող ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Հովհաննես Ալֆրեդի Մադոյանին (քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, նույնականացման քարտ՝ 010801496, տրված 12.07.2019թ. 011-ի կողմից, սոցիալական քարտ՝ 3210760365, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Չարենց 9 շ., բն. 32)՝ վերջինիս հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

6. Հանձնարարել Ընդլայնվող ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Մադոյանին և Միացող ընկերության ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Բերբերյանին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

դիմել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ ընկերությունների միացման ճանապարհով վերակազմակերպման պետական գրանցման համար:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

06.08.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360